# ՀՀ Վայոց ձորի մարզպետը հյուրընկալվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում

21.02.2014

 

Փետրվարի 19–ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում հյուրընկալվել էր ՀՀ Վայոց ձորի մարզպետ **Էդգար Ղազարյանը**: Ակադեմիայի մագիստրանտների հետ կայացած հանդիպման ընթացքում հյուրը խոսեց Հայաստանի Հանրապետությունում Տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործման անհրաժեշտության և այդ ուղղությամբ հանրապետությունում նախապատրաստվող գործընթացների մասին:

1996 թվականից ի վեր հանրապետությունում սահմանված վարչատարածքային բաժանումը կատարելագործման կարիք ունի: Տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման, ինչպես նաև համայնքների միջև միջհամայնքային համագործակցության խորացման նպատակով կառավարությունը նպատակահարմար է գտնում համայնքների խոշորացման եղանակով իրականացնել համայնքային կարողությունների ամրապնդմանն ու զարգացմանը միտված վարչատարածքային բարեփոխումներ: Արդյունքում էականորեն կկրճատվի համայնքների թվաքանակը, կկենտրոնացվեն համայնքների նյութական, ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսները, որոնք ուղղված կլինեն բնակչությանը հանրային բնույթի ծառայությունների մատուցման որակի բարձրացմանն ու ընդհանուր հետաքրքրության խնդիրների լուծմանը:

Բնականաբար, վարչատարածքային նման բարեփոխումներ իրականացնելը հեշտ գործընթաց չէ, և այդ ճանապարհին բազում խնդիրներ կարող են առաջանալ: Ուստի յուրաքանչյուր որոշում ընդունելուց առաջ անհրաժեշտ է հանգամանալից քննարկումներ իրականացնել:

Էդգար Ղազարյանը պատասխանեց հանդիպմանը մասնակցող ուսանողներին հետաքրքրող մի շարք հարցերի: